



Հայոց Պատմութեան Հիմնահարցերու Հեռակայ Ծրագիրի Ներկայացում՝ Լիբանանահայ Վարժարաններու Տնօրէններու Եւ Ուսուցիչներու

0 Featured-News, Գաղութային November 7, 2015

PRINT EMAIL A- A+



Երեւանի պետական համալսարանի պատուիրակութեան Լիբանան այցելութեան ծիրին մէջ, երէկ՝ ուրբաթ, 6 նոյեմբեր 2015-ի յետմիջօրէի ժամը 5:00-ին, «Ազդակ»-ի «Փինիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ Երեւանի պետական համալսարանի Հայոց պատմութեան հիմնահարցերու հեռակայ ծրագիրի ներկայացում: Հանդիպումին ներկայ էին լիբանանահայ վարժարաններու տնօրէններ, հայագիտական դասանիւթերու ուսուցիչներ եւ հայոց պատմութեամբ հետաքրքրուողներ:



Երեւանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտութիւններու հիմնարկի փոխտնօրէն Միւր Յովհաննիսեան գոհունակութիւն յայտնեց տրուած առիթին համար, որուն ընդմէջէն «փառլըր փոյնթ»-ով մանրամասնօրէն ներկայացուց ծրագիրը՝ բացատրութիւններ տալով անոր յաջորդական հանգրուաններուն մասին: Ան ըսաւ, թէ տոյն ծրագիրի մշակման հիմնական նպատակն էր կարելիութիւն ընձեռել համայնքին, նաեւ այն անձերուն, որոնք կ'ուզէն հայոց պատմութեան մարզին նորութիւններուն հետ քայլ պահել առանց ժամանակ կորսնցնելու, առանց լքելու իրենց բնակավայրը, առանց մեծ գումարներ ծախսելու եւ ստանալ համալսարանական մակարդակով գիտելիքներ:

Աւարտին ներկաները ծրագիրին մասին ստացան բացատրողական թերթիկներ:

Նշենք, որ Հայոց պատմութեան հիմնահարցերու հեռակայ ծրագիրը կ'իրագործուի համագործակցութեամբ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան:

17.11.2015 Հայոց Պատմության Հիմնահարցերու Հեռակալ Ծրագրիի Ներկայացում՝ Լիբանանահայ Վարժարաններու Տնօրէններու Եւ Ուսուցիչներու ...

Նոյն օրը երեկոյեան ժամը 6:00-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ Ազգային վարժարաններու տնօրէններու եւ հայոց պատմութեան ուսուցիչներու հանդիպում պատուիրակութեան անդամներուն հետ: Հանդիպումին, համալսարանի դասախօսները ներկայացուցին դասապահերու ընթացքին կատարուած դիտարկումներու արժեւորումները: Երեսնի պետական համալսարանի պատուիրակութիւնը մեծապէս գնահատեց սփիւռքի իրականութեան մէջ հայ ուսուցիչին կատարած մեծ ու նուիրական աշխատանքը:

Լուսանկարները՝ ԺԱՔ ՅԱԿՈԲԵԱՆԻ

»